ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՏԿԵՆ-ՄԱԱՊՁԲ-25/13

«14» «11» 2025թ.

ք. Երևան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և մի կողմից և **«ՍՈՒՄԱՌ-25» ՍՊ** ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա. Աբգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **890 010 (ութ հարյուր իննսուն հազար տասը) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն:

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության **2 (երկու)** օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, որպես ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գնորդ	**Վաճառող**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք. Երևան,Կառավարական տուն 3, ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011018513 ՀՎՀՀ 02815457 Գլխավոր բարտուղար Ա. Երիցյան /ստորագրություն/ Կ.Տ	**«ՍՈՒՄԱՌ-25» ՍՊԸ** **ՀՀ, ՄԱՍԻՍ ԿԱՅԱՐԱՆ** **ՆԱԽԿԻՆ ԴՊՐ Շ 2** **Բանկը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ** **Հ/Հ 2050322116611001** **ՀՎՀՀ 04253634** **տնօրեն՝ Ա. Խաչումյան** (ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
«14» «11» 205թ. կնքված
« ՏԿԵՆ-ՄԱԱՊՁԲ-25/13» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	Ապրանքներ								
...ավերով ...ախատեսված ...ափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավորի գին	ընդհանուր գինը ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարում	
								հասցեն	Ժամկետը**
1	18141300/3	Պաշտպանիչ հանդերձանք	Մեկանգամյա օգտագործման կոմբինիզոն: Ռադիոակտիվ մասնիկներից պաշտպանիչ կոմբինիզոն, պոլիէթիլեն Գույն՝ ցանկացած գույն բացի սևից Չափսեր՝ L Պաշտպանիչ հագուստը արդյունավետորեն կիրառվում է թունավոր նյութերից և փոշուց պաշտպանվելու նպատակով:	հատ	3900	39000	10	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
2	18141300/4	Պաշտպանիչ հանդերձանք	Աշխատանքային կոստյումը թույլ է տալիս բաց տարածքում աշխատել՝ նույնիսկ երբ անձրև է տեղում: Պատրաստված է ջրակայուն և ազատ շնչող, ՊՎՔ նյութից: Գլխանոցի քուղը կարգավորվող է: Թևատակերն օդափոխվում են: Կոստյումը բաղկացած է տաբատից և բաճկոնից: Չափերը՝ M/L, նախօրոք համաձայնեցնել պատվիրատուի հետ:	հատ	7500	22500	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
3	18141300/5	Պաշտպանիչ հանդերձանք	Աշխատանքային աշնանային/ձմեռային համազգեստ գրպաններով, գլխարկով՝ Կոստյումը բաղկացած է տաբատից և բաճկոնից: Չափսը՝ M/L, , նախօրոք համաձայնեցնել պատվիրատուի հետ:	հատ	30000	90000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
4	18111200/2	Աշխատանքային կոմբինիզոն	Մուգ կապույտ աշխատանքային կոմբինիզոն (բազմակի օգտագործման), ունի հարմարավետ գրպաններ: Նյութը՝ կիսաբամբակյա պոլիէսթեր: Չափեր՝ M/L, նախօրոք համաձայնեցնել պատվիրատուի հետ:	հատ	11000	33000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..

5	39522271/2	Ավիացիոն բաճկոններ, գոտիներ	Լուսանդրադարձող ժիլետ Նյութը պոլիէսթեր Ազատ շնչող: Ընդհանուր արտացոլող ժապավեն: Գրպաններով: Չափս՝ ստանդարտ կամ M/L հագնողի , նախօրոք համաձայնեցնել պատվիրատուի հետ: Գույնը սև կամ մուգ կապույտ: Ժիլետի անդրադարձող շերտերը ապահովում են աշխատողների առավելագույն տեսանելիությունը գիշերը	հատ	3500	10500	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
6	18831100/2	Պաշտպանիչ կոշկեղեն	Պաշտպանիչ կոշիկներ ներբանի և մատների պաշտպանությամբ: Կոշիկը հարվածակայուն է և ջրակայուն, հակաստատիկ, ծակոցակայուն, ունի շնչող գործվածք: Նյութը կարող է լինել կաշվե, ռետինե կամ այլ դիմացկուն նյութից: Չափսերը՝ 3x38,5 կամ 39, նախօրոք համաձայնեցնել պատվիրատուի հետ	զույգ	20000	60000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
7	18811100/2	Անջրանցիկ կոշկեղեն	Ռեզինե երկարաճիտ կոշիկներ (սապոգ) տախտակամած գործելու համար Բարձրությունը՝ 37 ±1 սմ: Բարձր մակարդակի յուղերի, թթուների, ալկալիների հանդեպ դիմադրողականություն: 100% անջրանցիկ: Չափսը՝ 3*39, նախօրոք համաձայնեցնել պատվիրատուի հետ: 	զույգ	7000	21000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
8	33141201/2	Բախիլներ	Մեկանգամյա օգտագործման կոշիկի ծածկոցները օգատագործվում են կոշիկների աղտոտումը կանխելու համար, տուփի մեջ առնվազն 50 զույգ: Բարձր ամրության պոլիէթիլեն: Հատը հասկանալ տուփ: 	հատ	1200	1200	1	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
9	18421140/3	Մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ	Մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ Նիտրիլային ձեռնոցներ պատրաստված բարձրորակ պոլիէսթերային նյութից: Չափսը L կամ XL, նախօրոք համաձայնեցնել պատվիրատուի հետ:	զույգ	495	4950	10	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..

10	18421140/4	Մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ	Մեկանգամյա օգտագործման ծանր աշխատանքային ձեռնոցներ Նրանք ունեն լավ դիմադրություն, ծակելու և քիմիական դիմադրություն Կարող են օգտագործվել ագրեսիվ միջավայրում: **Նկարագիր** Ռետինե ձեռնոց: Նյութը՝ սինթետիկ կաուչուկ: Ափի հյուսվածքը՝ հարթ և կոպիտ : Հիպոալերգիկ է: Աշխատանքի ընթացքում պաշտպանում է քերծվածքներից, կոշտուկներից և կեղտից: Նիտրիլային կաուչուկի շարունակական ծածկույթը ապահովում է քերման և մաշվածության լավ դիմադրությունը, ինչպես նաև թթուների, յուղերի և ճարպերի կայունությունը: Չափսը՝ նախօրոք համաձայնեցնել պատվիրատուի հետ:	զույգ	1200	7200	6	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
11	18421140/5	Մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ	Մեկանգամյա օգտագործման լատեքսային ձեռնոցներ 1 տուփի մեջ 50 զույգ:	զույգ	84	4200	50	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
12	18141100/4	Աշխատանքային ձեռնոցներ	Կեվլար ձեռնոցներ, ունի կտրվածքի դիմադրության պաշտպանություն և նվազեցնում է սուր գործիքների հետ շփման ռիսկը:	զույգ	10000	30 000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
13	18141100/5	Աշխատանքային ձեռնոցներ	Կաշվե ձեռնոցներ: Համակցված կաշվե ձեռնոցները պաշտպանում են մեխանիկական վնասներից: Ապահովում են աշխատանքի ընթացքում անվտանգության ապահովումը: Պատրաստված է ամուր և բնական կաշվից: Ձեռնոցները հուսալիորեն պաշտպանում են ձեռքերը կտրվածքներից , ծակոցներից, քերծվածքներից և այլ մեխանիկական վնասվածքներից:	զույգ	2200	13200	6	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
14	18141100/6	Աշխատանքային ձեռնոցներ	Թեթև աշխատանքային օգտագործման անվտանգության ձեռնոցներ Աշխատանքային ձեռնոց կտորից արդյունաբերական: Նյութը՝ պոլիէթիլեն, պոլիուրեթան: Հարթ և կոպիտ հյուսվածքով ափի կառուցվածք : Ձեռնոցն ունի բարձր դիմացկունություն ի շնորհիվ նրա, որ այն պատրաստված է պոլիէթիլենային թելերից: Յուղոտ մասերը անվտանգ պահելու համար տրամադրվում է պոլիուրեթանային ծածկույթ:	զույգ	300	1800	6	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
15	33141158/3	Վիրաբուժական ձեռնոցներ	Ձեռնոցներ տուփով - վիրաբուժական նիտրիլային M չափս, 1 տուփի մեջ 50 զույգ 	զույգ	48	2400	50	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..

16	18421130/3	Ձեռնոցներ	Լատեքսային ձեռնոցներ Թեթև լատեքսային հիմք Չափսը զույգ L կամ XL, նախօրոք համաձայնեցնել պատվիրատուի հետ: Նախատեսված է ձեռքերը պաշտպանելու համար, աշխատելիս և դրանց պահպանման ընթացքում Ձեռնոցների հիմքը պատրաստված է առաձգական նուրբ լատեքսից: Յուղազերծող հատկությունները ապահովում են գերազանց չոր բռնում՝ պահպանելով ձեռքի զգայունությունը:	զույգ	600	3600	6	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
17	18421130/4	Ձեռնոցներ	Զույգ նեոպրենային աշխատանքային ձեռնոցներ: պատրաստված են փափուկ նեոպրենից: Բաղադրությունը՝ նեոպրեն և նեյլոնե: Ջրակայուն:	զույգ	4000	12000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
18	18441210/4	Սաղավարտներ	Կոշտ գլխարկ անվտանգության սաղավարտ Անվտանգության սաղավարտը գլխարկ է, որը պաշտպանում է օգտագործողի գլուխը ընկնող առարկաների կամ փոքր շաղ տվող առարկաների և այլ հատուկ գործոնների հետևանքով առաջացած վնասներից Հարմար են ընդհանուր աշխատավայրերի համար և ունեն հիմնական պաշտպանիչ հատկություններ Նյութը՝ պոլիպրոպիլեն (PP): Ներքին շերտի նյութը՝ պլաստմաս: Տեսքով վերին ամրացումը՝ V տիպի: Կասեցումը՝ 4 կետանոց: Գլխի չափը՝ ամրակով կարգավորվող: Հովհարով՝ այո: 	հատ	3400	10200	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
19	18441100/2	Գլխարկներ	Պաշտպանիչ ենթասաղավարտ-գլխարկ Գույն: նախընտրելի է սև Չափս: Ունիվերսալ Ապրանքը կարող է օգտագործվել անվտանգության սաղավարտների, եռակցման վահանների և դեմքի վահանների հետ միասին: 	հատ	2000	6000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
20	18441160/2	Կեպի	Ջրակայուն գլխարկ Հովհարավոր գլխարկ Չափը՝ 56±2սմ 	հատ	2000	6000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..

21	33731200/2	Պաշտպանիչ հատուկ ակնոցներ	Ոսպնյակի գույնը՝ թափանցիկ: Օդափոխություն՝ կա : Պանորամային ապակի՝ այո: Պաշտպանություն թռչող մասնիկներից՝ այո: Նյութը՝ պլաստմաս: Նախատեսված է աչքերը պաշտպանելու համար՝ տարբեր տեսակի աշխատանքներ կատարելիս: Փափուկ ռետինե շրջանակը, հարմարեցված ձևը և կարգավորվող ամրակները ապահովում են կատարյալ տեղավորումը ձեր դեմքին: Օդափոխման ներդիրները կանխում են ոսպնյակների մշուշումը:	հատ	1200	7200	6	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
22	32341120/2	Գլխին դրվող ականջակալներ	Լսողության պաշտպանություն կամ ականջակալներ կամ ականջի խցաններ, նյութը՝ ABS պլաստմաս: Աղմուկի մակարդակի նվազումը՝ ոչ պակաս 24±2 Դբ: Երկարության ճշգրտում - այո: Ականջակալները օգտագործվում են չափավոր աղմուկից պաշտպանվելու համար: Պատրաստված է որակյալ պլաստիկից և փափուկ ծածկույթից՝ առավելագույն հարմարավետության համար: Կարգավորվող ճնշման աղբյուրի և հատուկ պրոֆիլի շնորհիվ ականջակալները կատարյալ տեղավորվում են գլխին:	հատ	3400	10200	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
23	44611130/2	Շնչառական սարքավորումներ	Ամբողջ դեմքի respirator շնչառական սարքեր, որոնք ներառում են պաշտպանելու օդի վնասակար աղտոտիչների ներթափանցումից և թթվածնի անբավարար մթնոլորտից: Արտաքին միջավայրից օդի անցումը թոքեր և հակառակ ուղղությամբ, որի ընթացքում օրգանիզմը ստանում է թթվածին և արտազատում թթվածնի երկօքսիդ: Ունի օդի 2 զտիչներ:	հատ	20000	60000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
24	33141129/3	Դիմակ	Կիսադեմ ռեսպիրատոր/ շնչառական սարք 2 փականներով/քարթրիջներով պաշտպանիչ դիմակ- Ռեսպիրատոր + Ակնոց, Հակագազ: 2 փականները ֆիլտրում են օդը, օգտագործվում է քիմիական, և այլ ոլորտներում:	հատ	15000	45000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..

25	18931220/3	Ձեռքի պայուսակներ	Ձեռքի պայուսակ՝ ուսապարկ: Չափսերը՝ 44 սմ*16սմ*30 սմ: Առավելագույն բեռնումը՝ 8կգ (թույլատրեի շեղումը 5%): Նյութը՝ Ջրակայուն, դիմացկուն: Բռնակով, կողային գրպան(ներ)ով: Արտաքին գրպաններ՝ լրացուցիչ պահեստային հզորության համար:	հատ	12000	36000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
26	30237270/2	Համակարգչի պայուսակ	Նոութբուքի պայուսակ 400*300*50մմ (թույլատրեի շեղումը 5%):, ջրակայուն:	հատ	12000	12000	1	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
27	32341110/2	Բարձրախոսներ	Պրոֆեսիոնալ մեգաֆոն՝ ծովահենով և LED լույսերով: Siren ազդանշանային ռեժիմ: Ուժեղացնում է վթարային ձայնը կարգավորելի ձայնով մեգաֆոնի բարձրախոսի միջոցով: Ապրանքի չափերը 15,49 x 25,91 x 15,49 սմ (թույլատրեի շեղումը 5%):; 	հատ	18000	18000	1	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
28	30237111/4	Սնուցման մարտկոց	Բարձրախոսի համար նախատեսված մարտկոց: Սովորաբար գործում է 4 հատ C մարտկոցով:	հատ	1245	9960	8	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
29	31521570/2	Լապտերներ	Ձեռքի լապտեր Աշխատում է 3 հատ AAA մարտկոցով: Ճառագայթման տարածությունը հասնում է մինչև 30±2մ: Ունի լույսի հեռավորությունը կարգավորելու հնարավորություն և աշխատանքային երեք ռեժիմ: Ջրակայուն է և շատ ամուր: 	հատ	1600	4800	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
30	30237111/5	Սնուցման մարտկոց	AAA մարտկոց 3 ձեռքի լապտերների համար: 1 ձեռքի լապտերը սովորաբար աշխատում է 3 հատ AAA մարտկոցներով:	հատ	300	5400	18	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..

31	38631100/2	Հեռադիտակ	Հեռադիտակ, ջրակայուն: Նյութ՝ բարձրորակ պլաստիկ: Չափը 16 x 12 x 7 սմ (թույլատրեի շեղումը 5%): Զում՝ առնվազն 8x Հեռադիտակը կարող է անհատականորեն կարգավորվել յուրաքանչյուր օգտագործողի համար: Ցանկալի է գիշերային տեսանելիությամբ, լուսանկարելու և եռոտանու վրա ֆիքսելու հնարավորությամբ: 	հատ	40000	40000	1	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
32	30192620/2	Եռոտանի (շտատիվ)	Երկդիտակ եռոտանի շտատիվ սմարթֆոնի/տեսախցիկի/հեռադիտակի համար Նվազագույն բարձրություն՝ 53-170սմ (թույլատրեի շեղումը 5%): 	հատ	17000	17000	1	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
33	39522180/2	Վրաններ	Անջրաթափանց վրան: Ավտոմատ բացվող: Չափերը՝ 2x2x1,35մ(թույլատրեի շեղումը 5%): Նախատեսված է մոտ 3 անձի համար: 	հատ	21000	21000	1	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
34	42121230/2	Վառելիքի պոմպեր	Վառելիքի նմուշառման դյուրակիր պոմպ, որը նախատեսված է հեղուկ վառելիքի ապահով տեղափոխման/նմուշարկման համար: Կարող է օգտագործվել դիզելի, բենզինի, կերոսինի, ջրի տեղափոխման նպատակով: Մարտկոցով աշխատող պլաստիկե խողովակ: Չափսերը՝ խողովակի երկարությունը՝ ոչ պակաս 70 սմ: 	հատ	10000	10000	1	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
35	30237111/ 2	Սնուցման մարտկոց	Վառելիքի պոմպը աշխատում է 2 հատ D մարտկոցներով:	հատ	1600	3200	2	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..

36	30237111/7	Սնուցման մարտկոց	Վառելիքի պոմպի աշխատում է 6 հատ AA մարտկոցներով:	հատ	250	1500	6	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
37	35821400/5	Դրոշներ	Նշանակումների դրոշներ/մակնշման դրոշներ Կայուն մետաղյա նշանակումների դրոշներ/մակնշման դրոշներ լանդշաֆտի համար Անհրաժեշտ լանդշաֆտային, հետազոտական նախագծերի համար՝ տեղանքը մակնանշելու համար 38x14x10 սմ (թույլատրեի շեղումը 5%):, ցանկացած գույնի 	հատ	100	10000	100	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
38	30192200/2	Սանտիմետրային ժապավեններ	Պողպատե չափիչ ժապավեն մինչև 30մ չափումներ կատարելու համար: Չափման սանդղակը՝ մետր /դյույմ:	հատ	2400	7200	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
39	39541110/2	Պարաններ	Պարան առնվազն 10 մմ x 15 մ Երկարությունը՝ 1500մմ (թույլատրեի շեղումը 5%): Պոլիպրոպիլենային պլաստիկից ճոպանը ջրակայուն է: Դիմացկուն է բորբոսների, այլ սնկերի նկատմամբ և չի փտում: Մետրը հասկանալ հատ:	մետր	3000	3000	1	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
40	44423610/4	Արտացոլող ժապավեններ	Ժապավեն արգելափակման 75մմx250մ(թույլատրեի շեղումը 5%): Գույնը՝ կարմիր, սպիտակ 	հատ	3000	9000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
41	44423610/4	Արտացոլող ժապավեններ	Շրջանցող ժապավեն 75մմx250մ (թույլատրեի շեղումը 5%): Գույնը՝ դեղին, սև 	հատ	3000	9000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..

42	38111100/2	Կողմնացույցեր	Ձեռքի կողմնացույց: Տրամագիծը՝ 5սմ(թույլատրեի շեղումը 5%): Ընթեռնելի սլաքներով Շարժական դիզայն, հարմար է տեղափոխման համար: Ծալվող, դյուրակիր, ջրակայուն: 	հատ	2500	7500	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
43	18521400/2	Վայրկյանաչափ	Ձեռքի թվային վայրկանաչափ Ցույց է տալիս րոպեներ, վայրկյաններ և հարյուրերրորդական վայրկյաններ: Նյութը՝ պլաստիկ:	հատ	1900	5700	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
44	39221420/2	Խոզանակներ	Սարքերի, սարքավորումների վրայից փոշի մաքրող խոզանակ 	հատ	1000	3000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
45	37311190/4	Սուլիչներ	Սուլիչ մարզական Նյութը՝ պլաստիկ, ներառված է թել Ձայնը՝ 115±5 դեցիբել 	հատ	430	1290	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
46	38621200/4	Հայելիներ	Հայելին հարմար աքսեսուար է, երբ հարկ է դժվար հասանելի վայրերը կամ աշխատանքային նյութի հակառակ երեսը դիտելու: Նյութը ՊՎՔ, չժանգոտվող պողպատ Երկարությունը՝ 260-850մմ (թույլատրեի շեղումը 5%): Քմ-ը հասկանալ հատ:	քմ	1750	5250	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
47	38651230/2	Խոշորացուցիչներ	Ձեռքի խոշորացույց: Չափսը:15CM (Length)*6CM (Width)*1CM (Height) Խոշորացումը առնվազն 10X Magnifier Թույլատրելի շեղումը 5% 	հատ	3000	9000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
48	22111150/6	Քարտեզներ	Երկրի քարտեզ Հայաստանի քարտեզ էջերի քանակը : 1 կազմ : փափուկ չափեր : ոչ պակաս 700x1000 լեզու : Հայերեն	հատ	3000	3000	1	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..

49	22111150/5	Քարտեզներ	ՀՀ յուրաքանչյուր մարզի քարտեզ էջերի քանակը: 1 կազմ : փափուկ չափեր: առնվազն 300 X 500 լեզու: Հայերեն/Անգլերեն 	հատ	1000	11000	11	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
50	22111150/4	Քարտեզներ	Աշխարհի ֆիզիկական քարտեզ էջերի քանակը: 1 չափեր: առնվազն 700 X 1000 լեզու: Հայերեն 	հատ	3000	3000	1	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
51	30192800/2	Ինքնակպչուն պիտակներ	Կպչուն նույնականացում: 58 մմ×60 մմ (թույլատրեի շեղումը 5%) Ինքնակպչուն պիտակներ Ոչ պակաս, քան 500 պիտակ(թուփ) Գույնը՝ սպիտակ Վրան նշումներ կատարելու համար 	հատ	800	2400	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
52	42111220/2	Պատյաններ	Բջջային հեռախոսների ջրակայուն պատյան Բջջային հեռախոսի համար նախատեսված պատյան որի նպատակն է պաշտպանել սմարթֆոնը ջրից: Սմարթֆոնի առավելագույն չափսեր՝ ոչ պակաս 8x10 սմ Նյութը՝ պոլիեսթեր Չափսեր՝ 10x20 սմ Ժապավենի երկարություն՝ առնվազն 39 սմ (թույլատրեի շեղումը 5%): 	հատ	2000	6000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
53	39224440/3	Շշեր	Ստերիլ նմուշառման շիշ ինքնաթիռի վառելիքի լաբորատոր փորձարկման համար, արտահոսքից պաշտպանված Ծավալը՝ առնվազն 1լ*3 Ստերիլ, մանրէազերծ	հատ	4000	12000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
54	39224440/4	Շշեր	Ստերիլ նմուշառման շիշ ինքնաթիռի վառելիքի լաբորատոր փորձարկման համար, արտահոսքից պաշտպանված Ծավալը՝ առնվազն 250մլ*3 Ստերիլ, մանրէազերծ	հատ	2000	6000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..

55	33161240/2	Վիրաբուժական զամբյուղներ	Հերմետիկ (վիրաբուժական) օդամոլիչ զամբյուղներ/տարա առնվազն 4լ. Նյութը՝ պոլիպրոպիլեն Դիմացկուն և ճկուն Նյութը չի պարունակում տոքսիններ և չի շփվում պարունակության հետ 	հատ	2200	6600	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
56	18931220/4	Ձեռքի պայուսակներ	Առաջին շտապօգնության պայուսակ, որն իր մեջ ներառում է առաջին օգնության հավաքածու: Չափսեր՝ 14*20 (թույլատրեի շեղումը 5%): Կոմպլեկտացիան սովորաբար ներառում է առաջին բժշկական օգնության պարագաներ՝ բինտ, մկրատ, սպիրտային անձեռոցիկներ, պինցետ, սանտավիկներ, ականջի փայտիկներ, վիրակապ և այլն:	հատ	5000	15000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
57	24451140/2	Ախտահանիչ նյութեր	Ախտահանիչ միջոցն՝ ալկոսփրեյ, օգտագործվում են ձեռքերի վարակիչ գործոնները նվազեցնելու համար • Ազդում է առավելագույնը 15 վայրկյանից, • Նախատեսված է ձեռքերի,մետաղական և պլաստիկ մակերեսների ախտահանման համար, • Միայն արտաքին օգտագործման համար: Էթիլային սպիրտի պարունակությունը ոչ պակաս 75%: Ոչնչացնում է առավել հայտնի մանրէների առնվազն 99.9%-ը: 6*0.5լիտր Կգ-ը հասկանալ հատ	կգ	1700	10200	6	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
58	33191640/2	Մանրէազերծման թղթե պայուսակներ կամ փաթեթներ	Կենսաբանական վտանգի հեռացման պայուսակներ Գույնը կարմիր կամ դեղին կենսավտանգ պայուսակ Խնդրում ենք նկատի ունենալ, որ դրանք մեկանգամյա օգտագործման պայուսակներ են Ձգվող դիմադրություն և լավ ճկունություն, ջերմակայուն Պայուսակները կենսավտանգի նշանով են: Բեռնվածության կարողությունը՝ 3կգ: Չափերը՝80սմ*60սմ (թույլատրեի շեղումը 5%): Պայուսակների քանակը առնվազն 100 հատ, անկախ տուփերի քանակից 	հատ	300	30000	100	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..

59	33621642/4	Հականեխիչ (անտիսեպտիկ) միջոցներ	հակասեպտիկ բուժիչ հանգստացնող քսուք, օգնում է քերծվածքների, վերքերի, արևի այրվածքի, ճնշման դեպքում և հանգստացնում է մաշկը, 50 մլ: կգ-ը հասկանալ հատ	կգ	820	2460	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
60	03111250/2	Բամբակ	Բժշկական ներծծող ստերիլ ռուլետ, /բամբակյա/ բժշկական ներծծող բամբակը պատրաստված է բամբակյա մանրաթելից, ունի ուժեղ ներծծող կարողություն, հիմնական սանիտարական նյութերը, որոնք օգտագործվում են հիվանդների վերքերի վիրակապման պաշտպանության մաքրման նպատակներով: Լայնություն՝ 15սմ, Երկարությունը՝ 270սմ (թույլատրեի շեղումը 5%): Կգ-ը հասկանալ հատ: 	կգ	2000	6000	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
61	39831245/2	Օճառ հեղուկ	Անտիսեպտիկ հեղուկ օճառ 200-225 մլ, Լիտրը հասկանալ հատ	լիտր	1200	3600	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
62	33711480/2	Օճառ	Անտիսեպտիկ օճառ, շնորհիվ իր մեջ առկա տարրերի և հակաբակտերիալ հատկանիշների ապահովում է մաշկի վրայից զանազան բակտերիաների և կեղտի արդյունավետ մաքրումը: Առնվազն 100 գր ոչնչացնում է մանրէները:	հատ	500	1500	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
63	33141110/2	Վիրակապեր	Թանզիվե բժշկական անձեռոցիկ, 16սմ x 14սմ (թույլատրեի շեղումը 5%), 10 հատ Շնչող, մաշկի համար հարմար, հիպոալերգեն 	հատ	300	900	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ..
64	33141116/2	Վիրակապական նյութերի հավաքածուներ	Բարձր դիմացկունությամբ տեքստիլ սպեղանի սինթետիկ ռետինե հիմքի սոսինձով: Կարկատանն ունի ուժեղ կպչուն ուժ: Չափսը՝ 5սմx5մ (թույլատրեի շեղումը 5%): Օդի և գոլորշու թափանցելիություն, ունի ջրամեկուսիչ ներծծում: 	հատ	1500	4500	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ.

65	33621643/2	Հականեխիչ անտիսեպտիկ հեղուկ	Բժշկական սպիրտ մաշկի ախտահանման համար առնվազն 70% ոչ պակաս 250 մլ Լիտրը հասկանալ հատ	լիտր	600	1800	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ .
66	24451111/2	Միջատասպան հեղուկ նյութեր	Սփրեյ մոծակներից, մլակներից, մոզերից պաշտպանվելու համար: Ոչ պակաս 50 մլ Լիտրը հասկանալ հատ:	լիտր	700	2100	3	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ .
67	44511371/2	Գործիքների հավաքածուներ	Ձեռքի գործիքների հավաքածու Հավաքածուն ներառում է՝ 1 հատ պողպատե չափիչ ժապավեն (3մ), 1 հատ համակցված աքցան (150մմ), 1 հատ մկրատ (200մմ), 1 հատ կարգավորվող բանալի (150մմ), 1 հատ դանակ՝ ջարդվող սայրով, 1 հատ փոքր մուրճ-մեխահան, 1 հատ տեստեր մատիտ (140մմ), 1 հատ 1/4" 100մմ մագնիսական սրունք, 10 հատ բիթ (SL4, SL5, SL6, PH1, PH2, PH3, T10, T15, T20, T30), 2 հատ ճշգրիտ պտուտակահան (SL2.0x50մմ, PH000x50մմ), 7 հատ վեցանկյուն բանալի (1.5մմ, 2մմ, 2.5մմ, 3մմ, 4մմ, 5մմ, 6մմ), 1 հատ գործիքների պայուսակ: 	լրակազմ	12000	12000	1	ՀՀ ք. Երևան, Կառավարական տուն 3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 15.12.2025թ .

Գնորդ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան,Կառավարական տուն 3,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011018513
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար
Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ

Վաճառող

«ՍՈՒՄԱՌ-25» ՍՊԸ
ՀՀ, ՄԱՍԻՍ ԿԱՅԱՐԱՆ
ՆԱԽԿԻՆ ԴՊՐ Շ 2
Բանկը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050322116611001
ՀՎՀՀ 04253634
տնօրեն՝ Ա. Խաչումյան

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«14» «11» 205թ. կնքված
« ՏԿԵՆ-ՄԱԱՊՁԲ-25/13» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքներ															
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	18141300/3	Պաշտպանիչ հանդերձանք	-	-	-	-	-	-	-	-	-	-	39000	39000	39000
2	18141300/4	Պաշտպանիչ հանդերձանք	-	-	-	-	-	-	-	-	-	-	22500	22500	22500
3	18141300/5	Պաշտպանիչ հանդերձանք	-	-	-	-	-	-	-	-	-	-	90000	90000	90000
4	18111200/2	Աշխատանքային կոմբինիզոն	-	-	-	-	-	-	-	-	-	-	33000	33000	33000
5	39522271/2	Ավիացիոն բաճկոններ, գոտիներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	10500	10500	10500
6	18831100/2	Պաշտպանիչ կոշկեղեն	-	-	-	-	-	-	-	-	-	-	60000	60000	60000

7	18811100/2	Անջրանցիկ կոշկեղեն	-	-	-	-	-	-	-	-	-	-	21000	21000	21000
8	33141201/2	Բախիլներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	1200	1200	1200
9	18421140/3	Մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	4950	4950	4950
10	18421140/4	Մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	7200	7200	7200
11	18421140/5	Մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	4200	4200	4200
12	18141100/4	Աշխատանքային ձեռնոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	30000	30000	30000
13	18141100/5	Աշխատանքային ձեռնոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	13200	13200	13200
14	18141100/6	Աշխատանքային ձեռնոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	1800	1800	1800
15	33141158/3	Վիրաբուժական ձեռնոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	2400	2400	2400
16	18421130/3	Ձեռնոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	3600	3600	3600
17	18421130/4	Ձեռնոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	12000	12000	12000
18	18441210/4	Սաղավարտներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	10200	10200	10200
19	18441100/2	Գլխարկներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	6000	6000	6000

20	18441160/2	Կեպի	-	-	-	-	-	-	-	-	-	-	6000	6000	6000
21	33731200/2	Պաշտպանիչ հատուկ ակնոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	7200	7200	7200
22	32341120/2	Գլխին դրվող ականջակալներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	10200	10200	10200
23	44611130/2	Շնչառական սարքավորումներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	60000	60000	60000
24	33141129/3	Դիմակ	-	-	-	-	-	-	-	-	-	-	45000	45000	45000
25	18931220/3	Ձեռքի պայուսակներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	36000	36000	36000
26	30237270/2	Համակարգչի պայուսակ	-	-	-	-	-	-	-	-	-	-	12000	12000	12000
27	32341110/2	Բարձրախոսներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	18000	18000	18000
28	30237111/4	Սնուցման մարտկոց	-	-	-	-	-	-	-	-	-	-	9960	9960	9960
29	31521570/2	Լապտերներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	4800	4800	4800
30	30237111/5	Սնուցման մարտկոց	-	-	-	-	-	-	-	-	-	-	5400	5400	5400
31	38631100/2	Հեռադիտակ	-	-	-	-	-	-	-	-	-	-	40000	40000	40000
32	30192620/2	Եռոտանի (շտատիվ)	-	-	-	-	-	-	-	-	-	-	17000	17000	17000

33	39522180/2	Վրաններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	21000	21000	21000
34	42121230/2	Վառելիքի պոմպեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	10000	10000	10000
35	30237111/6	Սնուցման մարտկոց	-	-	-	-	-	-	-	-	-	-	3200	3200	3200
36	30237111/7	Սնուցման մարտկոց	-	-	-	-	-	-	-	-	-	-	1500	1500	1500
37	35821400/5	Դրոշներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	10000	10000	10000
38	30192200/2	Սանտիմետրային ժապավեններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	7200	7200	7200
39	39541110/2	Պարաններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	3000	3000	3000
40	44423610/4	Արտացոլող ժապավեններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	9000	9000	9000
41	44423610/4	Արտացոլող ժապավեններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	9000	9000	9000
42	38111100/2	Կողմնացույցեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	7500	7500	7500
43	18521400/2	Վայրկյանաչափ	-	-	-	-	-	-	-	-	-	-	5700	5700	5700
44	39221420/2	Խոզանակներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	3000	3000	3000
45	37311190/4	Սուլիչներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	1290	1290	1290
46	38621200/4	Հայելիներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	5250	5250	5250

47	38651230/2	Խոշորացուցիչներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	9000	9000	9000
48	22111150/6	Քարտեզներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	3000	3000	3000
49	22111150/5	Քարտեզներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	11000	11000	11000
50	22111150/4	Քարտեզներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	3000	3000	3000
51	30192800/2	Ինքնակպչուն պիտակներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	2400	2400	2400
52	42111220/2	Ղասոյաններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	6000	6000	6000
53	39224440/3	Շշեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	12000	12000	12000
54	39224440/4	Շշեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	6000	6000	6000
55	33161240/2	Վիրաբուժական գամբյուղներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	6600	6600	6600
56	18931220/4	Ձեռքի պայուսակներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	15000	15000	15000
57	24451140/2	Սիտահանձնիչ նյութեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	10200	10200	10200
58	33191640/2	Մանրէազերծման թելե պայուսակներ կամ փաթեթներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	30000	30000	30000

59	33621642/4	Հականեխիչ (անտիսեպտիկ) միջոցներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	2460	2460	2460
60	03111250/2	Բամբակ	-	-	-	-	-	-	-	-	-	-	6000	6000	6000
61	39831245/2	Օճառ հեղուկ	-	-	-	-	-	-	-	-	-	-	3600	3600	3600
62	33711480/2	Օճառ	-	-	-	-	-	-	-	-	-	-	1500	1500	1500
63	33141110/2	Վիրակապեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	900	900	900
64	33141116/2	Վիրակապական նյութերի հավաքածուներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	4500	4500	4500
65	33621643/2	Հականեխիչ անտիսեպտիկ հեղուկ	-	-	-	-	-	-	-	-	-	-	1800	1800	1800
66	24451111/2	Միջատասպան հեղուկ նյութեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	2100	2100	2100
67	44511371/2	Գործիքների հավաքածուներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	12000	12000	12000

Գնորդ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք. Երևան,Կառավարական տուն 3,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011018513
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար
Ա.Ք. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Վաճառող

«ՍՈՒՄԱՌ-25» ՍՊԸ
ՀՀ, ՄԱՍԻՍ ԿԱՅԱՐԱՆ
ՆԱԽԿԻՆ ԴՊՐ Շ 2
Բանկը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050322116611001
ՀՎՀՀ 04253634
տնօրեն՝ Ա. Խաչատրյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
« » 2025թ. կնքված
« » ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 2025թ. կնքված
« » ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն